Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

«14» փետրվարի 2019թ. ***ք. Վանաձոր***

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի պետի տեղակալ՝ արդարադատության մայոր Էդմոն Ափինյանս ուսումնասիրելով 15.06.2018թ. վերսկսված և 28.06.2018թ-ին հարուցված թիվ՝ 04313316, 04313319, 04313323, 04313309 կատարողական վարույթների նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 29.03.2018թ. տրված թիվ ԼԴ4/1275/02/16 կատարողական թերթի համաձայն պետք է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ4/0078/02/11 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով Զեփյուռ Միկինյանից հօգուտ Սիրանուշ Պողոսյանի բռնագանձման ենթակա 700.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձումը տարածելու նպատակով Զեփյուռ Միկինյանի, Լեռնիկ Սաֆարյանի, Զոհրապ Սաֆարյանի, Վարդիթեր Սաֆարյանի և Վանուշ Սաֆարյանի ընդհանուր սեփականությունից Զեփյուռ Միկինյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Լոռու մարզի Գոգարան համայնքում թիվ 06030-123-282 կադաստրային համարի տակ գրանցված գյուղատնտեսական նշանակության 0.48 հա հողամասից, թիվ 06030-102-22 կադաստրային համարի տակ գրանցված գյուղատնտեսական նշանակության 0.293 հա հողամասից, թիվ 06030-131-2 կադաստրային համարի տակ գրանցված գյուղատնտեսական նշանակության 0.02 հա հողամասից և թիվ 06030-1-16 կադաստրային համարի տակ գրանցված 0.151 հա տնամերձ հողամասից Զեփյուռ Միկինյանին 1/5-րդ բաժինը առանձնացնել՝ ըստ <Փորձաքննությունների ազգային բյուրո> ՊՈԱԿ-ի կողմից 19.06.2017թ. տրված մասնագիտական եզրակացությանը կից հատակագծերի՝ հետևյալ եղանակով.

1. Թիվ 06030-131-2 ծածկագրով 0.02 հա հողամասից առանձնացված 0.004 հա տարածքը՝ ըստ ներկայացված տարբերակի.
2. Թիվ 06030-102-22 ծածկագրով 0.293 հա հողամասից առանձնացված 0.0586 հա տարածք՝ ըստ ներկայացված առաջին տարբերակի.
3. Թիվ 06030-123-282 ծածկագրով 0.48 հա հողամասից 0.096 հա առանձնացված տարածք՝ ըստ ներկայացված տարբերակի.
4. Թիվ 06030-1-16 ծածկագրով 0.151 հա հողամասից 0.0302 հա առանձնացված տարածք՝ ըստ ներկայացված առաջին տարբերակի.

Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի հինգ տոկոսը՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1 - 35.4 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Գրավատուներ Զեփյուռ Միկինյանին, Լեռնիկ Սաֆարյանին, Զոհրապ Սաֆարյանին, Վարդիթեր Սաֆարյանին և Վանուշ Սաֆարյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող, ներքոնշյալ անշարժ գույքերը ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, աճուրդի

էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ **harkadir.achurd.am կամ WWW.ajurd.am** միջոցով:

	լոտի անվանումը նկարագիրը	Գնահատման գինը	Մեկնարկային գինը	Անշարժ գույքի մեկ միավոր
	ՀՀ Լոռու մարզ, գյուղ Գոգարան 302.0 քմ հողամաս:	524.000 ՀՀ դրամ	393.000 ՀՀ դրամ	անշարժ գույքի մեկ միավոր
	ՀՀ Լոռու մարզ, գյուղ Գոգարան 40 քմ հողամաս:	12.000 ՀՀ դրամ	9.000 ՀՀ դրամ	անշարժ գույքի մեկ միավոր
	ՀՀ Լոռու մարզ, գյուղ Գոգարան 586 քմ հողամաս:	183.000 ՀՀ դրամ	137.250 ՀՀ դրամ	անշարժ գույքի մեկ միավոր
	ՀՀ Լոռու մարզ, գյուղ Գոգարան 960.0 քմ հողամաս:	300.000 ՀՀ դրամ	225.000 ՀՀ դրամ	անշարժ գույքի մեկ միավոր

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ է սահմանվում՝ « 05 » ապրիլի 2019 թ.

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«Դատական Ակտերի Հարկադիր Կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:*

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Եթե պարտապանն ունի այլ գույք, ապա լոտի մեկնարկային գինը տասներորդ հարկադիր աճուրդից հետո հաջորդ աճուրդներում չի իջեցվում: Եթե պարտապանը չունի այլ գույք, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը / գույքը / չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը / լոտը / պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի / լոտի / հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Բաժնի պետի տեղակալ՝
արդարադատության մայոր ***Է. Ափինյան***